ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017

02.2017

03.2017
Մարտ

04.2017

05.2017

06.2017

07.2017

08.2017

09.2017

10.2017

11.2017

12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Մարտ

թիվ 3 (223)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-71-Ն ՀՀ օրենքը

10 «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-72-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

15 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՈՍԿԵ ԼՈՒՄԱ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու, «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Ազատության» մասնաճյուղը հաշվառումից հանելու, «Հայավիաբանկ» ՓԲԸ լուծարվող բանկը լուծարված և գործունեությունը դադարած համարելու վերաբերյալ:

15 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԻԴՐԱՄ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության «Ստեփանավան», «Արթիկ», «Գյումրի 2», «Հրազդան» և «Եղեգնաձոր» մասնաճյուղերը հաշվառելու, «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Բաշինջաղյան» և «Թել-Սել էրեբունի» մասնաճյուղերը հաշվառումից հանելու, «ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» ՓԲԸ «Ռիա Մանի Թրանսֆեր» («Ria Money Transfer») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

15 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԻԴՐԱՄ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության «Դավիթաշեն ՏՊ» մասնաճյուղը հաշվառումից հանելու, «ԳՆԱՀԱՏՈՒՄ» ՍՊԸ-ի՝ գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան և «ԱԼԵՔՍ-ԳՐԻԳ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի որոշ լիցենզիաներ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

15 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Կումայրի» մասնաճյուղը և «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ առևտրային կոոպերատիվի «Աշտարակ» մասնաճյուղը գրանցելու, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Բյուզանդ», «Արթիկ 2» և «Արմավիր 2» մասնաճյուղերի գործունեությունը դադարեցնելու թույլտվություն տալու վերաբերյալ

15 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ՓԲԸ նկատմամբ տուգանք կիրառելու, 1 ՓԲԸ և 2 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 69Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 44-Ն որոշումը «Նոյյան տապան» ոսկե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 45-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 51Ա որոշումը «Բարսելոնայի լաբիրինթոս», «Մազոնեի լաբիրինթոս» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները հաստատելու մասին

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 53-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 54-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

34 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) կենսաթոշակային հաշիվ՝ մասնակիցների ռեեստրը վարողի մոտ սոցիալական վճար կատարող կամ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերած անձի անունով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են ձեռք բերված պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերը, ինչպես նաև տեղեկություններ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակի, այդ փայերի հաշվարկային արժեքի, այդ փայերը ձեռք բերելու համար կատարված կուտակային հատկացումների վերաբերյալ, օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված այլ տեղեկություններ.».

2) 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28) մասնակից՝ սույն օրենքով սահմանված կարգով սոցիալական վճար կատարող (կատարած) անձ, որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում, կամ որի համար (օգտին) կատարվում են կամավոր կենսաթոշակային վճարներ, կամ անձ, որն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Սույն օրենքի իմաստով՝ մասնակից չի հանդիսանում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը.».

3) 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29) մասնակիցների ռեեստր՝ մասնակիցների և նրանց անունով բացված կենսաթոշակային հաշիվներում հաշվառվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ: Մասնակիցների ռեեստրում առկա ամբողջ տեղեկատվությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն մասով սահմանված առավելագույն սահմանաչափերը չեն տարածվում սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերի վրա:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ և 12-րդ մասերով.

«11. Անձը կարող է ընտրել իր նկատմամբ չկիրառելու՝ սույն հոդվածի 6-րդ մասով և 81-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանաչափերը՝ այդ մասին ներկայացնելով դիմում հարկային մարմին: Սույն մասով սահմանված դիմումը ներկայացրած անձի կողմից վճարման ենթակա սոցիալական վճարի գումարը չի կարող գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» և 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված սահմանաչափերը: Անձը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել սույն մասով կատարված ընտրությունից՝ ներկայացնելով դիմում հարկային մարմին: Սույն մասում նշված դիմումները վարձու աշխատողը (բացի հարկային գործակալի պարտականությունից ազատված գործատուի վարձու աշխատողից) հարկային մարմին է ներկայացնում գործատուի միջոցով:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դիմումները հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը սահմանում է հարկային ոլորտի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:»:

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1],30.12.10:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի մարտի 1-ին (ՀՀՊՏ N 20 (1295), 5.04.17):

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասի 1-ին կետը «սերիան» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով.

2) 8-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցի չափը.»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «եթե կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի» բառերից հետո լրացնել «կամ սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումի հիման վրա կամ դատարանի որոշման հիման վրա» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Օտարերկրյա պետությունում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու և (կամ) բնակություն հաստատելու դեպքում այդ պետությունում նրանց անդամակցած կուտակային կենսաթոշակային համակարգից այդ անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում բացված կուտակային կենսաթոշակային հաշիվներին գումարները փոխանցելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության պետական լիազոր մարմինը:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը առաջին անգամ անձին ներկայացվում է կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումում նշված հասցեով՝ թղթային տարբերակով, եթե նա այլ տարբերակ չի ընտրել: Երկրորդ անգամ և հետագայում սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը թղթային տարբերակով ստանալու համար անձը յուրաքանչյուր անգամ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասերով.

«2.1. Եթե անձը մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող որևէ դիմումում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու համար ընտրել է էլեկտրոնային եղանակը, ապա առաջին անգամ և հետագայում սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը անձին ներկայացվում է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված որևէ դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Եթե անձը ցանկանում է դադարեցնել սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվության ստացումը, ապա սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին:

2.2. Եթե անձը սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը թղթային տարբերակով ստանալու համար մասնակիցների ռեեստրը վարողին դիմում չի ներկայացրել, և մասնակիցների ռեեստրը վարողի մոտ առկա չէ տվյալ անձի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեն, ապա սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը անձին կարող է ներկայացվել «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով (առկայության դեպքում):».

3) 3-րդ մասի առաջին նախադասության «բնակչության պետական ռեգիստրում նշված՝» բառերը փոխարինել «մասնակիցների ռեեստրը վարողի մոտ առկա՝» բառերով.

4) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն իրավունք չունի սույն օրենքով սահմանված կարգով ընտրելու պարտադիր կենսաթոշակային ֆոնդ կամ ֆոնդի կառավարիչ, փոխանակելու փայերը, դիմելու կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և

մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները ստանալու համար, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելու և արդյունքում ձևավորված դրամական միջոցները փոխանցելու օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին մինչև մասնակիցների ռեեստրը վարողին սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դիմումը ներկայացնելը:».

2) 14-րդ մասի «կենսաթոշակային տարիքը լրանալը» բառերը փոխարինել «կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) ժառանգների կամահայտնության հիման վրա փոխանցում է մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվին պահվող փայերը ժառանգի կենսաթոշակային հաշվին կամ մարում է այդ փայերը և արդյունքում ձևավորված դրամական միջոցները փոխանցում ժառանգի բանկային հաշվին, իսկ փայերն անժառանգ ճանաչվելու դեպքում մարում է կենսաթոշակային փայերը և ձևավորված դրամական միջոցները փոխանցում պետական բյուջե.»:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10) այն մասնակիցների թիվը, որոնց համար (օգտին) տվյալ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին կատարվում են կուտակային հատկացումներ տարեկան պարբերականությամբ:»:

Հոդված 9. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «ժառանգներին» բառից հետո լրացնել «և նոտարին» բառերով.

2) 1-ին մասը «ներկայացրել» բառից հետո լրացնել «, և նոտարներին, եթե ժառանգական գործի շրջանակներում վերջիններիս կողմից համապատասխան հարցում է ներկայացվել» բառերով:

Հոդված 10. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մինչև մայիսի 1-ը, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:»:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը «համար» բառից հետո լրացնել «՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 12. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 1-ին կետի «անձնագրի սերիան» բառերը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթի սերիան (առկայության դեպքում)» բառերով.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) մասնակցի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), մասնակցի կողմից նշված հասցեն և այլն).»:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե անձը չի ներկայացրել կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում, ապա մասնակիցների ռեեստրը վարողը տվյալ անձի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրությունից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին թղթային՝ մասնակիցների ռեեստրը վարողի մոտ առկա՝

Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով կամ էլեկտրոնային (առկայության դեպքում) ձևով տեղեկացում է ուղարկում տվյալ անձին (բացառությամբ այն դեպքի, երբ անձը ներկայացրել է սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դիմում): Ընդ որում, սույն մասի առաջին նախադասությամբ նախատեսված տեղեկացումը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկությունները:»:

Հոդված 14. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասի «10 օրվա» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա» բառերով.

2) 10-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոնների համաձայն՝ ֆոնդի կանոններով սահմանված հիմքերով: Ընդ որում, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոներով կարող են սահմանվել միայն Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ սահմանված փայերի հետգնման (մարման) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկման կասեցման հիմքերը: Սույն կետով սահմանված դեպքում փոխանակման ենթակա փայերի հետգնումը (մարումը) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկումը կարող է կասեցվել ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով՝ նախապես տեղեկացնելով Կենտրոնական բանկին, մասնակիցների ռեեստրը վարողին և պահառուին փայերի հետգնման (մարման) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկման կասեցման մասին՝ նշելով դրա հիմքերը, ինչպես նաև այդ մասին տեղեկատվությունը երեք օրվա ընթացքում հրապարակելով մասնակիցների ռեեստրը վարողի և կառավարչի պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 15. Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերի իմաստով բաժնային արժեթղթերը չեն ներառում այն ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը), որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն՝ ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը կարող է ներդրվել միայն սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված բանկային ավանդներում, պարտքային արժեթղթերում:»:

Հոդված 16. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը «Հայաստանի Հանրապետության,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության համայնքների,» բառերով.

2) 9-րդ մասի երկրորդ նախադասության «2 տոկոսը» բառերը փոխարինել «10 տոկոսը» բառերով.

3) 15-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մեկ անձի հետ ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, կամ գործարքը կնքվել է կարգավորվող շուկայում, և չի կարող գերազանցել 5 տոկոսը մնացած այլ դեպքերում:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-րդ մասով.

«24. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել նոր թողարկված արժեթղթերում, որոնց թողարկման և (կամ) առաջարկի պայմանների համաձայն՝ դրանք պետք է թույլատրվեն սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որևէ կարգավորվող շուկայում դրանց թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում:»:

Հոդված 17. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը «ժառանգված» բառից հետո լրացնել «յուրաքանչյուր ֆոնդի» բառերով:

Հոդված 18. Օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե հատուցման դեպքն առաջացել է որևէ անձի անօրինական գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ կառավարչի ֆիդուցիար պարտականությունների խախտման) հետևանքով, ապա երաշխավորված պարտադիր կուտակային հատկացումների՝ ճշգրտված տարեկան գնաճով հատուցումն իրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը և երաշխիքային ֆոնդը հետադարձ պահանջի իրավունք են ձեռք բերում տվյալ անձի նկատմամբ այն վնասի չափով, որի համար տվյալ անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:»:

Հոդված 19. Օրենքի 52-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասերով.

«7. Անուիտետի միջոցով կենսաթոշակ ստանալու մասնակցի իրավունքը իրացնելու և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից նշված գործընթացը կազմակերպելու նպատակով ապահովագրական ընկերությունը պարտավոր է մասնակցի հետ սույն հոդվածով նախատեսված անուիտետի պայմանագիրը կնքելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

1) մասնակցի անունը և ազգանունը.

2) մասնակցի հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

3) կնքված անուիտետի պայմանագրի համարը.

4) պայմանագրի կնքման ամսաթիվը և գործողության ժամկետը:

8. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել ստացված տվյալների գրանցումը:»:

Հոդված 20. Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Սույն մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության մասին համապատասխան բնագավառի (սոցիալական ապահովության կամ առողջապահության) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը տեղեկացնում է մասնակիցների ռեեստրը վարողին՝ այդ հիմքերի առկայությունը հավաստող փաստաթուղթը անձին տրամադրելու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվության տրամադրման կարգը և կազմը սահմանում է սույն մասով սահմանված համապատասխան բնագավառի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:»:

Հոդված 21. Օրենքի 58-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետի «անձնագրի սերիան» բառերը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթի սերիան (առկայության դեպքում)» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Կենսաթոշակային փայերի ժառանգման գործընթացը կազմակերպելու նպատակով նոտարը պարտավոր է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերը ժառանգելու մասին ժառանգության իրավունքի վկայագրում առկա տեղեկատվությունը տրամադրել մասնակիցների ռեեստրը վարողին՝ դրանք ժառանգին տրամադրելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով սահմանված տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:»:

Հոդված 22. Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դիմումը մերժելու և դրա պատճառների մասին մասնակիցների ռեեստրը վարողը տեղեկացնում է դիմում ներկայացրած ժառանգին այն եղանակով, որ եղանակով դիմումը ներկայացվել է:»:

Հոդված 23. Օրենքի 81-րդ հոդվածի 8-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն մասով սահմանված առավելագույն սահմանաչափերը (շեմերը) չեն տարածվում սույն օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերի վրա:»:

Հոդված 24. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված դիմումի ձևն ու ներկայացման կարգը հարկային ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի սահմանած նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո, և սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 2.2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
23 մարտի 2017 թ., Երևան, ՀՕ-71-Ն

«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը «ներդրման» բառից հետո լրացնել «սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերում չնշված» բառերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը, զուտ ակտիվների արժեքի հաշվարկում սխալների էականության չափանիշները և էական ճանաչված սխալների ուղղման (այդ թվում՝ ֆոնդի մասնակիցներին փոխհատուցման) կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասում «71-րդ հոդվածով» բառերը փոխարինել «26-րդ և 71-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասերով.

«7. Ֆոնդի կանոնների փոփոխությունն իրականացնում է ֆոնդի կառավարիչը, որի համար պահանջվում է ֆոնդի մասնակիցների առնվազն մեծամասնության համաձայնությունը, բացառությամբ բաց պայմանագրային ֆոնդերի և այն փակ պայմանագրային ֆոնդերի, որոնց կանոններով նախատեսված է ֆոնդի ժողովի գումարում: Ընդ որում, փակ պայմանագրային ֆոնդի կանոնների՝ իր իրավունքների սահմանափակմանը հանգեցնող կամ այլ էական փոփոխության դեպքում ֆոնդի մասնակիցն իրավունք ունի ողջամիտ ժամկետում ներկայացնելու իր փայերի հետգնման պահանջ: Եթե փակ պայմանագրային ֆոնդի կանոններով նախատեսված է ֆոնդի ժողովի գումարում, ապա այդ ֆոնդի կանոնների փոփոխությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 50-րդ հոդվածով և 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները:

8. Մասնակիցների իրավունքների սահմանափակմանը հանգեցնող կամ այլ էական փոփոխությունները ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից դրանց գրանցման պահից երկու ամիս հետո, եթե կանոններով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Կառավարիչը որոշակի աշխատանքային օրերի կարող է չհաշվարկել և չհրապարակել ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, եթե՝

1) տվյալ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկումը պատվիրակված է այլ անձի, որը օտարերկրյա կազմակերպություն է, և

2) այդ օրերը նախապես հրապարակվել են կառավարչի ինտերնետային կայքում: Ընդ որում, այդ օրերը կարող են ներառել միայն սույն կետի 1-ին ենթակետում նշված անձի համար ոչ աշխատանքային օրերը, ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերը (անկախ դրանց աշխատանքային լինելու հանգամանքից):»:

---

* *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի մարտի 1-ին (ՀՀՊՏ N 20 (1295), 5. 04.17):

Հոդված 6. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել տվյալ ֆոնդի կառավարչի, պահառուի, նրանց ղեկավարների, ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի և անկախ աուդիտոն իրականացնող անձի, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած, պատկանող և (կամ) նրանց կողմից վաճառվող արժեթղթերում կամ այլ ակտիվներում՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ (յուրաքանչյուր ներդրման դեպքի համար): Կենտրոնական բանկը կարող է մերժել համաձայնության տրամադրումը, եթե կառավարիչը չունի բավարար ընթացակարգեր և պատշաճ ներքին հսկողության համակարգ, որոնք կապահովեն այդպիսի ներդրումների դեպքում մասնակիցների լավագույն շահերի պաշտպանությունը, և (կամ) այդ ներդրման արդյունքում կվտանգվեն մասնակիցների շահերը:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ֆոնդի ակտիվների հաշվին այդ արժեթղթերը ձեռք են բերվել կարգավորվող շուկայում իրականացված գործարքի արդյունքում:

Պահառուի ակտիվներում ներդրում չի համարվում ֆոնդի ակտիվների պահպանումը պահառուի մոտ, ներառյալ՝ համապատասխան տոկոսների ստացման դիմաց:»:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում բոլոր «փոխառություններ» բառերը փոխարինել «փոխառու միջոցներ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 8. Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետով.

«9.1) կառավարչի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (բացառությամբ կառավարչի խորհրդի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի) հաստատումը.»:

Հոդված 9. Օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կառավարչի գործադիր տնօրենը կամ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները չեն կարող միևնույն կառավարչի մոտ զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ կառավարչի կամ ներդրումային ծառայություն մատուցող այլ անձի մոտ լինել ղեկավար (բացառությամբ դուստր կամ հիմնական ընկերության խորհրդի նախագահի և անդամի, ինչպես նաև սույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի) կամ այլ աշխատակից: Կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը կամ անդամը կամ գործադիր տնօրենի տեղակալը կարող է իրականացնել միևնույն կառավարչի ֆոնդի կառավարման գործունեություն: Սույն մասում նշված անձինք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, վճարովի այլ աշխատանք կարող են կատարել միայն խորհրդի համաձայնությամբ: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կառավարչի ղեկավարների և (կամ) այլ աշխատակիցների համար կարող են նախատեսվել պաշտոնների համատեղելիության այլ սահմանափակումներ՝ ուղղված շահերի հնարավոր բախումների և այլ ռիսկերի կանխարգելմանը:»:

Հոդված 10. Օրենքի 68-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին նախադասության «կառավարիչն ապացուցում է, որ» բառերը փոխարինել «կառավարիչը» բառով.

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-9-րդ մասերով.

«6. Եթե խախտվել են սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները, որոնց արդյունքում ֆոնդին կամ ֆոնդի մասնակից-

ներին պատճառվել է վնաս, ապա կառավարիչը պարտավոր է խախտման մասին Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետներում որոշել յուրաքանչյուր մասնակցին (ֆոնդին) պատճառված վնասի չափը և վնաս կրած մասնակիցներին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում ծանուցել պատճառված վնասի, դրա չափի և վնասի հատուցումն ստանալու կարգի ու ժամկետների մասին:

7. Կառավարիչը պետք է որոշի պատճառված վնասի չափը՝ ելնելով բոլոր գույքային վնասներից, ներառյալ՝ բաց թողնված օգուտը այն իրավիճակի համեմատությամբ, որը կլիներ, եթե խախտումը տեղի չունենար, և խախտման հետ կապված ակտիվները կառավարվեին այլ ակտիվներին համանման ձևով:

8. Կառավարչի կողմից պայմանագրային ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասի հատուցումն իրականացվում է ֆոնդի համապատասխան մասնակիցներին կառավարչի հաշվին ֆոնդի համապատասխան քանակի փայեր տեղաբաշխելու կամ ֆոնդին դրամական եղանակով վճարելու միջոցով: Հատուցման վճարման պահին տվյալ ֆոնդի մասնակից չհանդիսացող անձանց պատճառած վնասի հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելու միջոցով, բացառությամբ կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների, որոնց համար ձեռք են բերվում նրանց ընտրած պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված հատուցման կարգն ու պայմանները, այդ թվում՝ հատուցման եղանակի ընտրության չափանիշները:

9. Սույն հոդվածը չի սահմանափակում օրենքով սահմանված այլ հիմքերով վնասների հատուցման պահանջի ներկայացումը:»:

Հոդված 11. Օրենքի 70-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի 2-րդ կետը «կոնտրագենտի» բառից հետո լրացնել «(բացառությամբ ոչ ռեզիդենտ կոնտրագենտի)» բառերով.

2) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1) ոչ ռեզիդենտ կոնտրագենտի համաձայնությունն իրեն պատվիրակված գործառույթների իրականացման նկատմամբ կառավարչի կողմից վերահսկողության, այդ թվում՝ կառավարչի աուդիտի կամ Կենտրոնական բանկի համապատասխան պահանջի դեպքում պատվիրակված գործառույթների վերաբերյալ պահանջվող տեղեկությունների՝ կառավարչին տրամադրման մասին.»:

Հոդված 12. Օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը «լինել» բառից հետո լրացնել «Կենտրոնական դեպոզիտարիան կամ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 87-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի «կառավարչի խորհրդին:» բառերը փոխարինել «կառավարչին:» բառով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Պահառուն պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով կառավարչին, ֆոնդին կամ ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասների (ներառյալ՝ բաց թողնված օգուտների) համար, բացառությամբ այն դեպքերի, երբ պահառուն գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում: Ընդ որում, ֆոնդին կամ ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասի հատուցման պահանջով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է հանդես գալ տվյալ ֆոնդի կառավարիչը: Սույն օրենքի 68-րդ հոդվածի 6-9-րդ մասերը կիրառվում են պահառուի կողմից ֆոնդին կամ ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասի հատուցման նկատմամբ:»:

Հոդված 14. Օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Պայմանագրային ֆոնդի կառավարչի կամ կորպորատիվ ֆոնդի և նոր պահառուի միջև ֆոնդի պահառության պայմանագիր կնքվելու, ինչպես նաև ֆոնդի պահա-

ռության պայմանագրում էական փոփոխություններ կատարվելու դեպքում այդ փոփոխությունները (պայմանագիրը) պետք է 10-օրյա ժամկետում ներկայացվեն Կենտրոնական բանկ: Ներկայացված փոփոխությունները (պայմանագիրը) ենթակա են գրանցման Կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում գրանցվելու պահից: Նոր պահառուի հետ կնքված պայմանագրի գրանցումը կատարվում է պայմանագրային ֆոնդի կանոններում համապատասխան փոփոխություն կատարելու հետ միաժամանակ: Սույն մասի իմաստով էական է համարվում պահառուի, մատուցվող ծառայությունների շրջանակի, վճարների վերաբերյալ փոփոխությունը, ինչպես նաև գործարար շրջանառությունում նմանատիպ պայմանագրերի համար էական հանդիսացող այլ պայմանների փոփոխությունը:»:

Հոդված 15. Օրենքի 96-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կառավարիչը արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից եզրակացություն ներկայացնելը՝

1) կառավարչի՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար ներքին հսկողության համակարգի՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

2) Կենտրոնական բանկ ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամբողջականության ու արժանահավատության մասին:»:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
23 մարտի 2017 թ., Երևան, ՀՕ-72-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ՈՍԿԵ ԼՈՒՄԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 49Ա):
- ***Հաշվառումից հանվել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Ազատության» մասնաճյուղը (որոշում թիվ 50Ա):
- ***Լուծարված և գործունեությունը դադարած է համարվել*** «Հայավիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկը (որոշում թիվ 55/Ա):
- ***Հաշվառվել են*** «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Ստեփանավան», «Արթիկ», «Գյումրի 2», «Հրազդան» և «Եղեգնաձոր» մասնաճյուղերը (որոշում թիվ 60/Ա):
- ***Հաշվառումից հանվել են*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Բաշինջաղյան» և «Թել-Սել էրեբունի» մասնաճյուղերը (որոշում թիվ 68/Ա):
- «Ռիա Մանի Թրանսֆեր» («Ria Money Transfer») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում ***մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 73/Ա):
- ***Հաշվառումից հանվել է*** «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Դավիթաշեն ՏՊ» մասնաճյուղը (որոշում թիվ 74/Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԳՆԱՀԱՏՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 77/Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱԼԵՔՍ-ԳՐԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի որոշ լիցենզիաներ (որոշում թիվ 78/Ա):
- ***Գրանցվել են*** «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Կումայրի» և «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի **«**Աշտարակ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/164Ա,1/171Ա):
- ***Թույլատրվել է*** «Արդշինբանկ» ՓԲԸ-ին դադարեցնել բանկի «Բյուզանդ», «Արթիկ 2» և «Արմավիր 2» մասնաճյուղերի գործունեությունը (որոշում թիվ 1/192Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 300000 դրամ գումարի չափով, 1 փակ բաժնետիրական ընկերության և 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/214Ա, 1/215Ա, 1/216Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2017 թ. մարտի 28-ի թիվ 69Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

«Նոյյան տապան» ոսկե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2017 թվականի մարտի 30-ից շրջանառության մեջ դնել «Նոյյան տապան» ոսկե հուշադրամները:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
20 փետրվարի 2017 թ., N 44-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 17-ի թիվ 44-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Նոյյան տապան» 1 գրամ քաշով ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ-DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում առկա են «1 g» և «Au 999,9» մակագրությունները, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Հուշադրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Հուշադրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի $999,9^0$
Քաշը	1,0 գ
Տրամագիծը	13,9 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	3000 հատ

էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.03.2017 թ. (ՀՀԳՏ N10 (579), 15.03.2017):

«Նոյյան տապան» 1 գրամ քաշով ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Նոյյան տապան» 7,78 գրամ քաշով ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ-DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում առկա են «1/4 Oz» և «Au 999,9» մակագրությունները, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Հուշադրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Հուշադրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի $999,9^0$
Քաշը	7,78 գ
Տրամագիծը	20,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	1000 հատ

էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

«Նոյյան տապան» 7,78 գրամ քաշով ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Նոյյան տապան» 15,55 գրամ քաշով ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «25000 ԴՐԱՄ-DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում առկա են «1/2 Oz» և «Au 999,9» մակագրությունները, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Հուշադրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Հուշադրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	25000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի $999,9^0$
Քաշը	15,55 գ
Տրամագիծը	25,2 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	800 հատ

էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

«Նոյյան տապան» 15,55 գրամ քաշով ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Նոյյան տապան» 31,1 գրամ քաշով ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «50000 ԴՐԱՄ-DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում առկա են «1 Oz» և «Au 999,9» մակագրությունները, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Հուշադրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Հուշադրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	50000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի $999,9^0$
Քաշը	31,1 գ
Տրամագիծը	30,2 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

«Նոյյան տապան 31,1 գրամ քաշով ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը, «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև

հաշվի առնելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները՝ համաձայն որոնց սպառողները կկարողանան ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնել վարկային բյուրոյի դեմ ուղղված ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային բնույթի բողոքները, և

նպատակ ունենալով կանոնակարգը համահունչ դարձնել օրենքներով սահմանված դրույթներին, արդիականացնել և վերացնել կանոնակարգի կիրարկման ընթացքում ի հայտ եկած թերությունները՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ Կանոնակարգ 8/04-ը» հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ կանոնակարգ 8/04»-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագրում և Կանոնակարգի վերնագրում «բողոք-պահանջների» բառը փոխարինել «բողոքների» բառով,
2) Որոշման 1-ին կետում «բողոք-պահանջների» բառը փոխարինել «բողոքների» բառով,
3) Կանոնակարգում «Ընկերություն» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Ֆինանսական կազմակերպություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով,
4) Կանոնակարգում «Բողոք-պահանջ» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Բողոք» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, բացառությամբ Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի 1-ին նախադասության,
5) Կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1) ***Ֆինանսական կազմակերպություն կամ կազմակերպություն***՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած անձ (բացառությամբ՝ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի լիցենզիա ստացած անձանց), ինչպես նաև ԱՊՊԱ բյուրո և Վարկային բյուրո:»,

6) Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «***2) Բողոք***՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հաճախորդի կողմից ֆինանսական կազմակերպությանը կամ կազմակերպությանը գրավոր ներկայացված բողոք-պահանջ, որը կապված է ֆինանսական կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների հետ և պարունակում է գույքային պահանջ, իսկ վարկային բյուրոյի դեմ ուղղված բողոքները կարող են նաև լինել ոչ գույքային բնույթի: Ընդ որում, բողոքը պետք է առնվազն ներառի հաճախորդի անունը, ազգանունը, նրա հետադարձ կապի միջոցները (բնակության վայրը և հեռախոսահամար), ստորագրությունը, ինչպես նաև բողոքի նկարագրությունը:»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.03.2017 թ. (ՀՀԳՏ N10 (579), 15.03.2017):

7) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) ***Վարկային բյուրո***՝ ըստ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:»,

8) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ ենթակետով.

«8) ***ԱՊՊԱ բյուրո***՝ ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:»,

9) Կանոնակարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հավելված 3-ի, իսկ Վարկային բյուրոյի դեպքում՝ «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հավելված 4-ի»,

10) Կանոնակարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

11) Կանոնակարգի 13-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

12) Կանոնակարգի 13-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ֆինանսական կազմակերպության կողմից լրացված «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն՝ Հավելված 3-ի, իսկ Վարկային բյուրոյի դեպքում՝ «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հավելված 4-ի: Ֆինանսական կազմակերպությունը չի կարող փոփոխել ձևաթղթի դիզայնը և դրանում պարունակվող տեղեկատվությունը: Ֆինանսական կազմակերպությունը ձևաթղթի «Կազմակերպության ապրանքային նշանը (լոգո)» հատվածում տեղադրում է իր պաշտոնական ապրանքային նշանը, «Դիմեք» տողի բաց թողնված հատվածում լրացնում է ֆինանսական կազմակերպության անվանումը, պատասխանատու աշխատակցի էլեկտրոնային և փոստային հասցեները, իսկ ձևաթղթի ներքևի հատվածի «Հարցերի դեպքում դիմեք» նշագրված տողում լրացնում է ֆինանսական կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:»,

13) Կանոնակարգի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Բողոքը մերժելու կամ մասնակի բավարարելու դեպքում գրավոր պատասխանին կից ֆինանսական կազմակերպությունը տրամադրում է, իսկ եթե բողոքը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, ապա ուղարկում է ֆինանսական կազմակերպության կողմից լրացված «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հավելված 3-ի, իսկ Վարկային բյուրոյի դեպքում՝ «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հավելված 4-ի:»,

14) Կանոնակարգի Հավելված 1-ը և Հավելված 2-ը ուժը կորցրած ճանաչել:

15) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 3-ով և Հավելված 4-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում է):


2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
20 փետրվարի 2017 թ., N 45-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 17-ի թիվ 45-Ն որոշմամբ


«Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման հավելվածի



Հավելված 2

Հաստատված է Հայաստանի
հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2017 թ. փետրվարի 17-ի թիվ 45-Ն
որոշմամբ

«Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման հավելվածի



»:

«Բարսելոնայի լաբիրինթոս», «Մազոնեի լաբիրինթոս» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «է» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

Հաստատել «Բարսելոնայի լաբիրինթոս», «Մազոնեի լաբիրինթոս» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):


1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մարտի 2017 թ., N 51 Ա

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 3-ի թիվ 51Ա որոշմամբ

Բարսելոնայի լաբիրինթոս



«Մազոնեի լաբիրինթոս»



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իգ[1]» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման աճուրդի, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 142-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագիրը «կարգերը» բառից առաջ լրացնել «**ԱՃՈՒՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ**» բառերով,

2) Որոշման վերնագրից հանել «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ) ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ, ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՀԵՏԳՆՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ, ՀԵՏԳՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ**» բառերը,

3) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1 կետով.

«6.1. Հաստատել «Աճուրդի համակարգի օպերատորի միջոցով պետական պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման արդյունքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի իրականացման կարգը»՝ համաձայն Հավելված 7-ի (կցվում է):»,

4) ուժը կորցրած ճանաչել Որոշմամբ հաստատված Հավելված 1-ը,

5) Որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Սույն կարգի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր (այսուհետ՝ պարտատոմսեր) են համարվում այն պարտատոմսերը, որոնց թողարկման պահին դրանց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով սահմանվել է, որ տվյալ պարտատոմսերի պահառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:»,

6) Որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Գործակալ՝ ենթապահառուի կարգավիճակ ունեցող ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը Թողարկողի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր:»,

7) ուժը կորցրած ճանաչել Որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 4-րդ կետի 4-րդ ենթակետը,

8) Որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 7-րդ կետից հանել «, գանձապետական պահառուն» բառերը,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մարտի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.03.2017 թ. (ՀՀԳՏ N13 (582), 5.04.2017):

9) Որոշմամբ հաստատված Հավելված 2-ը 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1 կետով.

«22.1. Պահառուն թողարկողից ստացված հանձնարարականի հիման վրա իրականացնում է պարտատոմսերի փոխանցում թողարկողի տեղաբաշխման ենթակա արժեթղթերի դեպո հաշվից սահմանված ենթապահառուի ամփոփ ներդրողների դեպո հաշվին:»,

10) Որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 39-րդ կետի վերջին նախադասությունից հանել «թողարկողի և» ու «եռակողմ» բառերը,

11) Որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կարգը տարածվում է բոլոր այն պարտատոմսերի վրա, որոնց թողարկման պահին դրանց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով սահմանվել է, որ սույն կարգը տարածվում է տվյալ պարտատոմսերի վրա:»,

12) Որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 3-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի պաշտոնական ամրագրման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող պահառուական գործունեություն իրականացնող անձ: Պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը:»,

13) Որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Ենթապահառու՝ պահառության գործունեություն իրականացնող անձ, որը ըստ առանձին ներդրողների՝ հաշվառում է վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և Կենտրոնական դեպոզիտարիան: Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ:»,

14) Որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 3-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Գործակալ՝ ենթապահառուի կարգավիճակ ունեցող ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը Թողարկողի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր:»,

15) ուժը կորցրած ճանաչել Որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 3-րդ կետի 6-րդ ենթակետը,

16) Որոշմամբ հաստատված Հավելված 4-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի պաշտոնական ամրագրման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող պահառուական գործունեություն իրականացնող անձ, որը վարում է համակարգի մասնակիցների դեպո հաշիվները: Պահառուի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը:»,

17) Որոշմամբ հաստատված Հավելված 4-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Ենթապահառու՝ պահառության գործունեություն իրականացնող անձ, որը վարում է ներդրողների դեպո հաշիվները: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և Կենտրոնական դեպոզիտարիան: Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ: Կենտրոնական դեպոզիտարիան ենթապահառուական ծառայություններ մատուցում է միայն ներդրողների և անվանատերերի համար:»,

18) Որոշմամբ հաստատված Հավելված 4-ի 13-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Կենտրոնական դեպոզիտարիայի համար բացվում է միայն ներդրողների և անվանատերերի արժեթղթերի ամփոփ դեպո հաշիվ»,

19) Որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Պարտատոմս՝ Հայաստանի Հանրապետության պետական այն պարտատոմսերը, որոնց թողարկման պահին դրանց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով սահմանվել է, որ սույն կարգը տարածվում է տվյալ պարտատոմսի վրա:»,

20) Որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Գործակալ՝ ենթապահառուի կարգավիճակ ունեցող ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը Թողարկողի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր:»,

21) Որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի պաշտոնական ամրագրման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող պահառուական գործունեություն իրականացնող անձ: Պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը:»,

22) Որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 2-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Ենթապահառու՝ պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որում հաշվառվում են ներդրողներին սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը՝ ըստ առանձին սեփականատերերի: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և կենտրոնական դեպոզիտարիան: Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ:»,

23) ուժը կորցրած ճանաչել Որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 2-րդ կետի 10-րդ ենթակետը,

24) Որոշմամբ հաստատված Հավելված 6-ով հաստատված կարգի Հավելված 1-ից հանել «1. Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների» 1-ին կետը,

25) Որոշումը լրացնել նոր Հավելված 7-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 25-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 մարտի 2017 թ., N 53-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 3-ի թիվ 53-Ն որոշմամբ

«Հավելված 7
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հունիսի 7-ի
թիվ 142-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ԱՃՈՒՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Աճուրդի համակարգի օպերատորի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ ու երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման արդյունքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի իրականացման ընթացակարգը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1) ***Կենտրոնական բանկ***՝Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***Թողարկող***՝Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,
3) ***Պարտատոմս***՝ Թողարկողի կողմից թողարկված՝ Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր: Սույն կարգի իմաստով պարտատոմս չեն համարվում Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերը,
4) ***Վերջնահաշվարկ իրականացնող***՝ըստ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգի: Վերջնահաշվարկ իրականացնողի գործառույթները կատարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը,
5) ***Աճուրդի համակարգի օպերատոր***՝ *Թող*արկողի հետ պայմանագիր կնքած՝ աճուրդի համակարգն ապահովող իրավաբանական անձ,
6) ***Գործակալ***՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը թողարկողի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր,
7) ***Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (այսուհետ՝ Համակարգ)***՝ Կենտրոնական պահառուի մոտ վարվող դեպո հաշիվներում պարտատոմսերի հաշվառումը և դեպո հաշիվներով հաշվարկների իրականացումն ապահովող համակարգ,
8) ***Կենտրոնական պահառու (այսուհետ՝ Պահառու)***՝ թողարկողի առջև պարտատոմսերի պաշտոնական ամրագրման, շրջանառության պարտավորությունները կրող պահառուական գործունեություն իրականացնող անձ, որը թողարկողի հետ ունի կնքած պահառության պայմանագիր,
9) ***Ենթապահառու***՝ պահառուական գործունեություն իրականացնող անձ, որի մոտ հաշվառվում են սեփական, անվանատիրոջ և (կամ) ըստ առանձին ներդրողների՝ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը,
10) ***Տեղաբաշխում***՝ըստ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգի,

11) ***Հետգնում***՝ ըստ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգի,
12) ***Թողարկողի դրամական հաշիվ***՝ Թողարկողի գանձապետական միասնական հաշիվը Կենտրոնական բանկում,
13) ***Դեպո հաշիվ***՝ Պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված կենտրոնական պահառուի կամ ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով,
14) ***Մասնակիցների դրամական հաշիվներ***՝ Մասնակիցների դրամական հաշիվները Կենտրոնական բանկում,
15) ***Մասնակիցներ***՝ Գործակալներ, որոնք մասնակցում են պարտատոմսերի տեղաբաշխմանը և (կամ) հետգնմանը, ինչպես նաև Կենտրոնական բանկը,
16) ***Գործարք***՝պարտատոմսի առք և (կամ) վաճառք,
17) ***Գործարքի կնքման օր (ամսաթիվ)***՝ Աճուրդի համակարգի միջոցով պարտատոմսի առքի և (կամ) վաճառքի գործարքի կնքման օր,
18) ***Աճուրդ***՝ տեղաբաշխման (այդ թվում՝ տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ) և (կամ) հետգնման աճուրդ,
19) ***Աճուրդի համակարգ***՝ ըստ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգի,
20) ***Աճուրդի օր (ամսաթիվ)***՝ օրացուցային օր, երբ պետք է կազմակերպվի աճուրդը,
21) ***Վերջնահաշվարկ***՝ գործողությունների ամբողջություն, որի արդյունքում մարվում են դրամական միջոցների և Պարտատոմսերի փոխանցման հետ կապված Աճուրդի համակարգի մասնակիցների և թողարկողի միջև գործարքների կնքման արդյունքում ծագած պարտավորությունները,
22) ***Վերջնահաշվարկի օր (ամսաթիվ)***՝Թողարկողի կողմից սահմանված օրացուցային օր, երբ պետք է իրականացվի կնքված գործարքին համապատասխան՝ դրամական միջոցների և Պարտատոմսերի փոխանցման հետ կապված պարտավորությունների մարումը,
23) ***Էլեկտրոնային հաղորդագրություն***՝ Կենտրոնական բանկի կողմից հաստատված հատուկ ֆորմատներով կազմված էլեկտրոնային ստանդարտացված հաղորդագրություն, որի միջոցով ներկայացվում են վերջնահաշվարկի կատարման դեպո հանձնարարականները, դրանց ընդունման, կատարման, մերժման և այլ հաղորդագրությունները,
24) ***Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրություն***՝ էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է ըստ յուրաքանչյուր Մասնակցի սեփական և ներդրողների Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) արդյունքում վերջնահաշվարկի իրականացման հետ կապված տեղեկատվությունը (ՀՏ515),
25) ***Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) մասին ամփոփ հաղորդագրություն***՝ էլեկտրոնային հաղորդագրություն, որն օգտագործվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման և (կամ) հետգնման աճուրդների պարամետրերի, մասնակիցների բավարարված գործարքների գումարային տվյալների փոխանցման համար (ՀՏ575),
26) ***«Առաքում վճարման դիմաց» սկզբունք***՝Պարտատոմսերի փոխանցում Թողարկողի և Մասնակիցների դեպո հաշիվների միջև, որը միաժամանակ ուղեկցվում է Թողարկողի և Մասնակիցների միջև դրամական միջոցների փոխանցմամբ,
27) ***Ներդրող***՝ըստ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգի,
28) ***Հաշվանց***՝ըստ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի,
29) Սույն կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, տեղաբաշխման, վերջնահաշվարկի, հետգնման, շրջանառության և մարման սպասարկման» կարգով, պետական պարտատոմսերով գործառնությունները կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Կենտրոնական բանկն ապահովում է Պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման արդյունքում վերջնահաշվարկի իրականացման գործընթացը:

4. Տեղաբաշխման (հետգնման) վերջնահաշվարկի իրականացման համար օգտագործվում են Մասնակիցների դրամական և ազատ կարգավիճակով դեպո հաշիվները ու Թողարկողի դրամական և տեղաբաշխման ենթակա (հետ գնված) արժեթղթերի դեպո հաշիվները Կենտրոնական բանկում:

5. Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) հետ կապված վերջնահաշվարկի իրականացման համար համապատասխան տեղեկատվությունը Աճուրդի համակարգի օպերատորի կողմից ըստ յուրաքանչյուր Մասնակցի Կենտրոնական բանկին տրամադրվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությամբ (ՀՏ515): Տեխնիկատեղեկատվական վթարների դեպքում Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը պարունակող ֆայլը մուտքագրվում է Համակարգ Կենտրոնական բանկում տեղադրված պահուստային տերմինալից: Թղթային եղանակով որևէ տեղեկատվություն չի տրամադրվում:

6. Կենտրոնական բանկը մերժում է Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) մասին ամփոփ տեղեկատվություն պարունակող (ՀՏ575) և Վերջնահաշվարկի կատարման (ՀՏ515) հաղորդագրությունները, եթե նշված հաղորդագրությունները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևաչափին, ինչպես նաև սույն կարգով նախատեսված այլ դեպքերում:

7. Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրության մեջ սխալ կամ թերի նշված տեղեկատվության համար:

8. Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) մասին ամփոփ տեղեկատվությունը (ՀՏ575) Աճուրդի համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տրամադրվում է տեղաբաշխման (հետգնման) իրականացման օրը, ընդ որում, եթե վերջնահաշվարկն իրականացվում է «T+0» սկզբունքով՝ մինչև ժամը 15:00-ն:

9. Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը (ՀՏ515) Աճուրդի համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տրամադրվում է ըստ յուրաքանչյուր Մասնակցի՝ մինչև վերջնահաշվարկի իրականացման օրվա ժամը 15:00-ն:

10.Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը (ՀՏ515) Աճուրդի համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տրամադրվում է միայն Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) մասին ամփոփ տեղեկատվության (ՀՏ575) տրամադրումից հետո: Հակառակ դեպքում Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը մերժվում է:

11.Աճուրդի համակարգի օպերատորի միջոցով կատարվող Պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման գործարքների միջև հաշվանց չի իրականացվում: Կենտրոնական բանկի կողմից նույն օրվա ընթացքում Պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման կամ մի քանի տեղաբաշխման և (կամ) հետգնման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման դեպքում տեղաբաշխման և հետգնման կամ մի քանի տեղաբաշխման և (կամ) հետգնման վերջնահաշվարկները կատարվում են միմյանցից անկախ՝ առաջինը հասանելի՝ առաջինը ելք սկզբունքով: Վերջնահաշվարկի կատարման յուրաքանչյուր հաղորդագրություն կատարվում է ըստ դրանում նշված հաջորդականության: Վերջնահաշվարկի յուրաքանչյուր հաղորդագրության կատարման փորձից հետո, սույն կարգի 18-րդ, 20-րդ, 28-րդ և 30-րդ կետերով սահմանված կանոնների պահպանմամբ, անցում է կատարվում Վերջնահաշվարկի հաջորդ հաղորդագրության կատարմանը:

12.Կենտրոնական բանկի կողմից նույն օրվա ընթացքում Պարտատոմսերի տեղաբաշխման և մարման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման ժամանակ հաշվանց չի կատարվում:

13.Պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) հետ կապված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է «T+n»-երորդ օրը, որտեղ T-ն գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ n-ը գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը: Վերջնահաշվարկի իրականացման օրը սահմանվում է Թողարկողի կողմից, սակայն չի կարող գերազանցել 2 աշխատանքային օրը:

14.Եթե վերջնահաշվարկի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերջնահաշվարկի կատարման օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը:

ԳԼՈՒԽ 4
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Նախքան վերջնահաշվարկի հետ կապված գործընթացի իրականացումը Աճուրդի համակարգի օպերատորից Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրության ստացման պահին Կենտրոնական բանկն իրականացնում է սույն կարգով նախատեսված պահանջներին համապատասխանության ստուգում: Անհամապատասխանության դեպքում հաղորդագրությունը մերժվում է, հակառակ դեպքում՝ պահպանվում Համակարգում մինչև վերջնահաշվարկի կատարման օրը:

16. Կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են հետևյալ ժամկետներում.

1) եթե Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը Կենտրոնական բանկը ստանում է նախքան Վերջնահաշվարկի օրը, վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են վերջնահաշվարկի կատարման օրվա ժամը 10:00-ից մինչև 16:50-ը,
2) եթե Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը Կենտրոնական բանկը ստանում է Վերջնահաշվարկի օրը, վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են սույն կարգի 15-րդ կետով նախատեսված ստուգումից հետո՝ մինչև ժամը 16:50-ը:

17. Աճուրդի համակարգի օպերատորից ստացված Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրության հիման վրա Կենտրոնական բանկն ապահովում է վերջնահաշվարկի իրականացումը՝ տվյալ Մասնակցի համար ներկայացված հաղորդագրության մեջ նշված հերթականությանը համապատասխան՝ ըստ սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված ընթացակարգի:

18. Եթե մասնակցի դրամական հաշվին փաստացի առկա միջոցները չեն բավարարում որևէ գործարքի վերջնահաշվարկի իրականացման համար, ապա տվյալ գործարքի վերջնահաշվարկը չի կարող իրականացվել մասնակիորեն՝ տվյալ մասնակցի հաշվին առկա միջոցների չափով: Մասնակցի՝ միևնույն հաղորդագրության մեջ նշված հաջորդ գործարքների վերջնահաշվարկը ևս չի կատարվում՝ անկախ իրականացման հնարավորությունից:

19. Վերջնահաշվարկի իրականացման ժամանակ մասնակցի դրամական հաշվից միջոցների ելքագրման և մասնակցի դեպո հաշվին Պարտատոմսերի փոխանցման գործընթացը Կենտրոնական բանկի կողմից իրականացվում է ըստ յուրաքանչյուր գործարքի առանձին՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:

20. Պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման ժամանակ մասնակցի հաշվին դրամական միջոցների անբավարարության դեպքում չկատարված գործարքների վերաբերյալ տվյալները շարունակում են պահվել, և Համակարգում սահմանված հաճախականությամբ (յուրաքանչյուր 20 րոպեն մեկ) փորձ է արվում կատարել այդ գործարքները՝ մինչև ժամը 16:50-ը:

21. Մինչև սույն կարգի 20-րդ կետով նախատեսված ժամը վերջնահաշվարկի չկատարման դեպքում չկատարված յուրաքանչյուր գործարք մերժվում է՝ պահպանելով սույն կարգի 18-րդ կետում նշված պայմանը:

22. Պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման արդյունքում համապատասխան դրամական միջոցները Կենտրոնական բանկի կողմից մուտքագրվում են Թողարկողի դրամական հաշվին և ուղարկվում է հաղորդագրություն (ՀՏ910) Թողարկողի դրամական հաշվին մուտքագրված գումարի վերաբերյալ:

23. Պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված իրականացված վերջնահաշվարկի արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի օրը ստորև նշված անձանց տրամադրվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Աճուրդի համակարգի օպերատորին՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին՝ նշելով Մասնակիցների մերժված և կատարված գործարքները (ՀՏ516),
2) Մասնակիցներին՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին: Յուրաքանչյուր մասնակցին ուղարկվում է միայն տվյալ մասնակցի մերժված և կատարված գործարքների մասին տեղեկատվություն (ՀՏ516),
3) Մասնակիցներին՝ դրամական միջոցների շարժի մասին տեղեկատվություն՝ կնքված գործարքների կատարման արդյունքում մասնակցի հաշվից ելքագրված գումարի վերաբերյալ (ՀՏ900),
4) Թողարկողին՝ Աճուրդի համակարգի օպերատորին տրված տեղեկատվության պատճենը՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին՝ նշելով Մասնակիցների մերժված և կատարված գործարքները (ՀՏ516):

24. Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցներին դեպո և դրամական հաշիվների համապատասխան քաղվածքները տրամադրվում են կնքված գործարքների համար սահմանված վերջնահաշվարկի օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ԳԼՈՒԽ 5
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Նախքան վերջնահաշվարկի հետ կապված գործընթացի իրականացումը Աճուրդի համակարգի օպերատորից Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրության ստացման պահին Կենտրոնական բանկն իրականացնում է սույն կարգով նախատեսված պահանջներին համապատասխանության ստուգում: Անհամապատասխանության դեպքում հաղորդագրությունը մերժվում է, հակառակ դեպքում՝ պահպանվում Համակարգում մինչև վերջնահաշվարկի օրը:

26. Կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են հետևյալ ժամկետներում.

1) եթե Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը Կենտրոնական բանկը ստանում է նախքան Վերջնահաշվարկի օրը, վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են վերջնահաշվարկի կատարման օրվա ժամը 10:00-ից մինչև 16:50-ը,
2) եթե Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրությունը Կենտրոնական բանկը ստանում է Վերջնահաշվարկի օրը, վերջնահաշվարկի հետ կապված գործողությունները կատարվում են սույն կարգի 25-րդ կետով նախատեսված ստուգումից հետո՝ մինչև ժամը 16:50-ը:

27. Աճուրդի համակարգի օպերատորից ստացված Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրության հիման վրա Կենտրոնական բանկն ապահովում է վերջնահաշվարկի իրականացումը՝ տվյալ մասնակցի համար ներկայացված հաղորդագրության մեջ նշված հերթականությանը համապատասխան՝ ըստ սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված ընթացակարգի:

28. Եթե մասնակցի դեպո հաշվին փաստացի առկա Պարտատոմսերը չեն բավարարում որևէ գործարքի վերջնահաշվարկի իրականացման համար, ապա տվյալ գործարքի վերջնահաշվարկը չի կարող իրականացվել մասնակիորեն՝ տվյալ մասնակցի դեպո հաշվին առկա Պարտատոմսերի չափով: Մասնակցի՝ միևնույն հաղորդագրության մեջ նշված հաջորդ գործարքների վերջնահաշվարկը ևս չի կատարվում՝ անկախ իրականացման հնարավորությունից:

29. Պարտատոմսերի հետգնման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման ժամանակ մասնակցի դեպո հաշվից Պարտատոմսերի ելքագրման և մասնակցի դրամական հաշվին դրամական միջոցների փոխանցման գործընթացը Կենտրոնական բանկի կողմից իրականացվում է ըստ յուրաքանչյուր գործարքի առանձին՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:

30. Պարտատոմսերի հետգնման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման ժամանակ մասնակցի հաշվին Պարտատոմսերի անբավարարության դեպքում չկատարված գործարքների վերաբերյալ տվյալները շարունակում են պահվել, և Համակարգում սահմանված հաճախականությամբ (յուրաքանչյուր 20 րոպեն մեկ) փորձ է արվում կատարել այդ գործարքները՝ մինչև ժամը 16:50-ը:

31. Մինչև սույն կարգի 30-րդ կետով նախատեսված ժամը վերջնահաշվարկի չկատարման դեպքում չկատարված յուրաքանչյուր գործարք մերժվում է՝ պահպանելով սույն կարգի 28-րդ կետում նշված պայմանը:

32. Պարտատոմսերի հետգնման հետ կապված վերջնահաշվարկի իրականացման նպատակով վերջնահաշվարկի օրը համապատասխան դրամական միջոցները Կենտրոնական բանկի կողմից ելքագրվում են Թողարկողի դրամական հաշվից և Թողարկողին ուղարկվում է հաղորդագրություն (ՀՏ900) ելքագրված միջոցների վերաբերյալ:

33. Պարտատոմսերի հետգնման հետ կապված իրականացված վերջնահաշվարկի արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկի օրը ստորև նշված անձանց տրամադրվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Աճուրդի համակարգի օպերատորին՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին՝ նշելով Մասնակիցների մերժված և կատարված գործարքները (ՀՏ516),
2) Մասնակիցներին՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին: Յուրաքանչյուր մասնակցի ուղարկվում է միայն տվյալ մասնակցի մերժված և կատարված գործարքների մասին տեղեկատվություն (ՀՏ516),
3) Մասնակիցներին՝ դրամական միջոցների շարժի մասին տեղեկատվություն՝ կնքված գործարքների կատարման արդյունքում մասնակցի հաշվին մուտքագրված գումարի վերաբերյալ (ՀՏ910),

4) Թողարկողին՝ Աճուրդի համակարգի օպերատորին տրված տեղեկատվության պատճենը՝ կնքված գործարքների կատարման արդյունքների մասին՝ նշելով Մասնակիցների մերժված և կատարված գործարքները (ՀՏ516):

34. Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցներին դեպո և դրամական հաշիվների համապատասխան քաղվածքները տրամադրվում են կնքված գործարքների համար սահմանված վերջնահաշվարկի օրվան հաջորդող աշխատանքային օրը:»:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով խթանել պետական արժեթղթերի շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկի զարգացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 175-րդ, 176-րդ, 182-րդ և 194-րդ հոդվածները, 200-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ 84.1-րդ կետով.

«84.1. Հաշվարկային համակարգի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ գանձապետական պահառուի գործառույթների մասով: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան միջնորդագրի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան շնորհում է սահմանափակ իրավասությամբ հաշվի օպերատորի կարգավիճակ՝ գանձապետական պահառուի գործառույթների մասով, որի լիազորությունների շրջանակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության վրա՝ որպես գանձապետական պահառուի գործառույթներ իրականացնող, տարածվում են հաշվի օպերատորին վերաբերող դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով, Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով՝ հաշվի առնելով գանձապետական պահառուի կարգավիճակից բխող առանձնահատկությունները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 մարտի 2017 թ., N 54-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մարտի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.03.2017 թ. (ՀՀԳՏ N13 (582), 5.04.2017):

(ՄԱՐՏ 2017)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը կազմվում և հրապարակվում է եռամսյակային կտրվածքով՝ մարտ, հունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների տեղեկագրերում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 38

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 41

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 46

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 47

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 57

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 74
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 84
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 86
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գործող ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ ապահովագրության դասերի
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 95
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում
Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	***2017 թ. փետրվար***	***2017 թ. փետրվարի իրական աճի փոփոխությունը 2016 թ. փետրվարի նկատմամբ (%)***	***2017 թ. մարտ***	***2017 թ. մարտի իրական աճի փոփոխությունը 2016 թ. մարտի նկատմամբ (%)***
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		6.4[1]		6.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	120311.8	19.7[1]	133424.3	17.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	24374.0	0.0	29114.5	-3.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	9578.3	-19.6	18638.1	-13.5
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	164115.1[1]	10.3[1]	196328.7	13.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	98018.7[1]	9.7	107677.4	8.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	675.3	6.9	650.9	6.9
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	182899[1]	1.0[2]	187659[3]	1.3[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2017 թ.	***Գնաճ***	***Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը***	***Կապիտալ շինարարությունում գների փոփոխությունը***	***Գյուղատնտեսական մթերքների իրացման գների փոփոխությունը***
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.6	-0.1[1]	-0.7	3.2
Փետրվար	-0.9	0.3[1]	2.6	0.2
Մարտ	-0.3	-0.6	-2.3	-0.5
2017 թ. հունվար - մարտը 2016 թ. հունվար - մարտի նկատմամբ	-0.3	3.4	-2.8	-0.3

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	***2015***	***2016***	***2017***	***2017***	***2017***
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.5[1]	2.2	2.6	2.6	-0.6
Փետրվար	- 0.1[1]	-1.4	-0.9	1.7	-0.2
Մարտ	-0.1	-0.3	-0.3	1.4	-0.1
Ապրիլ	-0.4	-0.3			
Մայիս	-0.5	-0.7			
Հունիս	-1.4	-0.5			
Հուլիս	-2.2	-2.3			
Օգոստոս	0.1	-0.5			
Սեպտեմբեր	0.1	0.1			
Հոկտեմբեր	-0.4	0.5			
Նոյեմբեր	0.6	1.0			
Դեկտեմբեր	1.7	1.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.1	-1.1			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.7	-1.4			

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[5]

Անվանում	***2017 թ. մարտը 2017 թ. փետրվարի նկատմամբ (%)***	***Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)***
Գնաճ	**-0.3**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-0.8	-0.33
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	0.4	0.02
Հագուստ և կոշիկ	-0.7	-0.03
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	-0.5	-0.08
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.7	-0.02
Առողջապահություն	0.7	0.07
Տրանսպորտ	1.1	0.08
Կապ	0.0	0.00
Հանգիստ և մշակույթ	-0.6	-0.01
Կրթություն	0.0	0.00
Ռեստորաններ և հյուրանոցներ	0.1	0.00
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	-0.1	-0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2015	2016	2017
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.94[2]	0.02[2]	-0.01[2]
Փետրվար	0.21[2]	-0.09	-0.04
Մարտ	-0.09	-0.11	0.25
Ապրիլ	-0.39	-0.11	
Մայիս	-0.14	-0.18	
Հունիս	-0.41	-0.39	
Հուլիս	-0.56	-0.27	
Օգոստոս	-0.20	-0.02	
Սեպտեմբեր	0.08	0.11	
Հոկտեմբեր	0.28	0.38	
Նոյեմբեր	-0.13	0.02	
Դեկտեմբեր	-0.12	-0.20	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.82[2]	-1.05[2]	-1.61[2]
Փետրվար	4.45[2]	-1.39	-1.24
Մարտ	4.40	-1.47	-0.86
Ապրիլ	3.83	-1.31	
Մայիս	3.50	-1.35	
Հունիս	3.26	-1.45	
Հուլիս	2.42	-1.23	
Օգոստոս	1.93	-1.10	
Սեպտեմբեր	1.55	-1.12	
Հոկտեմբեր	1.35	-1.06	
Նոյեմբեր	0.74	-0.92	
Դեկտեմբեր	-0.54	-0.97	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**-0.86**
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	-0.22
Սրտանոթային դեղամիջոցներ	-0.15
Պանիր տնական	-0.10
Մանկական հիգիենիկ տակդիրներ	-0.10
Ջուգարանի թուղթ, դեմքի անձեռոցիկներ	-0.08
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	-0.06
Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ	-0.06
Սպասք լվացող միջոց (հեղուկ կամ փոշի)	-0.05
Միս խոզի	-0.05
Օճառ ձեռքի	-0.05
Վիրահատական ծառայություններ	0.06
Միս տավարի և հորթի	0.07
Կարագ սերուցքային	0.09
«Իշխան» ծուկ	0.12
Շաքարավազ	0.17

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2017 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2017 թ. հունվար - փետրվարը 2016 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2017 թ. հունվար - մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2017 թ. հունվար - մարտը 2016 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	274.5	120.4	443.1	116.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	493.6	125.1	803.7	117.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	219.0	131.5	360.6	119.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2016 թվական**					
	Մարտ			**Հունվար – մարտ**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	59282	35297	23985	136911	86407	50503
ԱՄՆ	15551	7338	8212	38859	19379	19481
Ուկրաինա	735	874	-138	1955	1935	20
Ղազախստան	1335	178	1157	3182	403	2780
Գերմանիա	4175	2642	1533	25640	5700	19940
Իսպանիա	762	793	-31	2119	2805	-686
Ֆրանսիա	1751	1054	698	6014	3100	2914
ԱՄԷ	2267	3192	-926	5799	6114	-316
Չինաստան	228	5264	-5036	515	11033	-10518
Թուրքիա	184	726	-542	714	1790	-1076
Այլ երկրներ	21661	12480	9182	51509	41923	9586
Ընդամենը	**107932**	**69837**	**38094**	**273218**	**180589**	**92629**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2017 թվական**					
	Մարտ			**Հունվար – մարտ**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	64474	28140	36334	165262	66190	99071
ԱՄՆ	16894	11392	5501	39729	37897	1832
Ուկրաինա	698	1240	-542	1737	2812	-1076
Ղազախստան	1562	307	1255	3815	625	3190
Գերմանիա	3685	3373	313	8030	7367	664
Իսպանիա	758	1411	-653	2061	3770	-1709
Ֆրանսիա	2222	997	1225	5458	2937	2522
ԱՄԷ	1137	1814	-677	3487	4365	-878
Չինաստան	232	5293	-5061	811	10750	-9939
Թուրքիա	87	729	-642	294	1767	-1473
Այլ երկրներ	35737	19806	15932	82277	45020	37256
Ընդամենը	**127486**	**74502**	**52984**	**312960**	**183500**	**129460**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2016 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	28830	17151	11678	66951	42266	24686
ԱՄՆ	7565	3565	4000	18995	9469	9526
Ուկրաինա	358	425	-68	956	946	10
Ղազախստան	649	86	563	1555	197	1359
Գերմանիա	2026	1281	744	12581	2781	9800
Իսպանիա	371	386	-15	1036	1371	-335
Ֆրանսիա	853	513	340	2943	1514	1429
ԱՄԷ	1103	1549	-446	2838	2980	-142
Չինաստան	111	2558	-2447	251	5371	-5120
Թուրքիա	90	353	-263	350	875	-525
Այլ երկրներ	10519	6060	4459	25143	20529	4614
Ընդամենը	**52474**	**33928**	**18545**	**133600**	**88299**	**45301**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2017 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	31269	13644	17624	80292	32149	48143
ԱՄՆ	8194	5527	2666	19295	18422	873
Ուկրաինա	338	602	-263	843	1366	-523
Ղազախստան	758	149	609	1853	303	1550
Գերմանիա	1786	1635	151	3895	3577	319
Իսպանիա	367	685	-317	1001	1831	-830
Ֆրանսիա	1079	484	595	2652	1427	1226
ԱՄԷ	551	879	-328	1694	2120	-426
Չինաստան	112	2566	-2453	394	5218	-4824
Թուրքիա	42	354	-311	143	858	-715
Այլ երկրներ	17319	9604	7715	39951	21865	18087
Ընդամենը	**61816**	**36128**	**25688**	**152014**	**89136**	**62878**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2016	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	151.2	146.3	143.9	140.5	139.8	139.4	136.9	136.0	136.5	136.9	140.8	141.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	273.5	269.3	267.1	263.0	264.0	264.9	266.6	266.4	268.1	268.9	274.5	274.2
2017	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.1	139.6	139.6									
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	271.5	268.5	268.0									


[1] 2014 թ. մայիսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ փոփոխվել է գործընկեր երկրների սպառողական գների ինդեքսի բազիսային տարին՝ 2010=100 (նախկինում՝ 2005=100):
[2] Հաշվարկի մեջ ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[4] Սճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016	2017		
	Դ [3]	Հ	Փ	Մ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**2204.1**	**2067.3**	**2026.3**	**2036.0**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	3.5	1.0	0.2	0.1
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2200.6	2066.3	2026.2	2035.9

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016	2017		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**624.8**	**631.6**	**632.0**	**640.1**
ԱՄՀ վարկ	285.7	288.1	287.2	289.0
ՀՓԻ տեղաբաշխում	118.3	119.2	119.1	119.7
Այլ վարկեր	220.1	223.8	225.1	230.9
Այլ պարտավորություններ	0.7	0.5	0.6	0.4

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈՒԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

Տարեթիվ	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ ժամանակավոր ոչ ֆինանսական ընկերություններ
	ժամանակավոր ոչ ֆինանսական ընկերություններ	ընդամենը	Կառավարության ընթացիկ և վերջնական հաշիվներ	ժամանակավոր ոչ ֆինանսական ընկերություններ	Ծրագրերի միջոցներ	ժամանակավոր ոչ ֆինանսական ընկերություններ	ընդամենը	
2016								
Դեկտեմբեր	21204	21204	182316	509	0	686	183511	**-162307**
2017								
Հունվար	21345	21345	206518	444	0	690	207652	**-186307**
Փետրվար	20980	20980	179150	557	0	690	180398	**-159418**
Մարտ	21328	21328	162243	473	0	686	163402	**-142074**

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Տարեթիվ	Փողի բազա [1] *(մլն ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլն ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլն ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլն ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլն ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլն ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլն ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլն ՀՀ դրամ)*	Փողի բազմապատիկ [5]	Դրամային զանգվածի փողմուլտիպլիկատոր [6]
2016										
Դեկտեմբեր	1042299	390918	264786	655705	418026	1073730	1106367	2180098	2.09	1.37
2017										
Հունվար	916389	363456	234479	597935	449198	1047133	1114253	2161386	2.36	1.47
Փետրվար	924870	360584	242261	602844	470811	1073656	1130765	2204420	2.38	1.45
Մարտ	970457	378849	247092	625941	468652	1094593	1127353	2221947	2.29	1.43

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):

[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:

[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի




Փողի զանգվածի կառուցվածքը



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում




ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


Տարեթիվ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2016					
Հունվար	853576	317248	520834	829119	1821278
Փետրվար	856314	315206	526090	849745	1854624
Մարտ	874198	318264	527459	868032	1875850
Ապրիլ	853867	322798	525741	881428	1884277
Մայիս	766518	323887	529246	893543	1877176
Հունիս	828921	330505	543967	921030	1923139
Հուլիս	837300	334250	553617	933048	1979223
Օգոստոս	859308	339548	562249	947240	1985737
Սեպտեմբեր	901090	346612	563522	953843	2004869
Հոկտեմբեր	908018	348080	565669	970990	2035834
Նոյեմբեր	876695	350567	578868	1005846	2067240
Դեկտեմբեր	908708	363647	617351	1037060	2123109
2017					
Հունվար	890168	374068	611962	1064154	2168044
Փետրվար	917920	364536	604072	1073969	2183478
